If you want a copy of the Notice of Privacy Practices, which is about your State-funded BCCTP privacy rights, call (916) 445-4646

إذا أردت نسخة من إشعار الممارسات الخاصة، الذي يتناول حقوق الممارسات الخاصة بك، اتصل برقم
(Arabic) (916) 445-4646

Եթե ցանկանում եք ձեռք բերել Գաղտնիության Գործածման մասին Ծանուցման պատճեն, որը ձեր գաղտնիության իրավունքների մասին է, ապա զանգահարեք (916) 445-4546 եռախոսահամարով: (Armenian)

若閣下希望索取一份有關閣下私隱權的私隱處理通知書，請致電 (916) 445-4646 (Cantonese)

اگر مایل به دریافت نسخه ای از این اطلاعیه شیوه های تامین حریم خصوصی، که درباره حقوق حفظ حریم خصوصی شماست، می باشید با شماره تلفن (916) 445-4646 تماس بگیرید.(Farsi)

បើអ្នកចង់បានមួយច្បាប់នៃសេចក្តីជូនដំណឹងស្តីអំពីភាពលាក់ការណ៍ ដែលនយាយអំពីសិទ្ធិនៃភាពលាក់ការណ៍របស់អ្នក សូមហៅលេខ (916) 445-4646 (Khmer)

만약 귀하의 프라이버시 권리를 설명한, 프라이버시 관행에 관한 통지문 사본을 원하시면, (916) 445-4646로 전화하세요. (Korean)

Yog hais tias koj xav tau ib daim qauv ntawm Daim Ntawv Qhia Txog Cov Kev Ua Feem Nraim, uas hais txog koj cov cai feem nraim, hu rau (916) 445-4646 (Hmong)

ԿԱՐԵՎՈՐ Է ՀԻՇԵԼ

**** ԿՐԹՔԻ ԵՎ ԱՐԳԱՆԴԻ ՎԶԻԿԻ ՔԱՂՑԿԵՂԻ ԾՐԱԳԻՐԸ ՉԻ ՊԱՐՈՒՆԱԿՈՒՄ ՁԵՐ ԲԺՇԿԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ՊԱՏՃԵՆՆԵՐԸ: ԵԹԵ ՑԱՆԿԱՆՈՒՄ ԵՔ ՍՏՈՒԳԵԼ, ՓՈՓՈԽԵԼ ՁԵՐ ԲԺՇԿԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԸ ԿԱՄ ՁԵՌՔ ԲԵՐԵԼ ԴՐԱՆՑ ՊԱՏՃԵՆՆԵՐԸ, ԽՆԴՐՈՒՄ ԵՆՔ ԴԻՄԵԼ ՁԵՐ ԲԺՇԿԻՆ, ԿԼԻՆԻԿԱ ԿԱՄ ՍՏԱՆԱԼ ՁԵՐ ԱՆԿԵՏԱՆ:****

- Պահանջեք 2003 թ. ապրիլի 14-ից հետո ձեր առողջական վիճակի մասին մեր կողմից տրամադրված տեղեկատվության ցուցակը: Այդ ցուցակը ձեզ կտեղեկացնի, թե ինչպիս՞ի տեղեկություն է բացահայտվել մեր կողմից, ում, երբ և ինչ պատճառներով է այն տրամադրվել: Ցուցակը տեղեկություն չի պարունակում այն մասին, թե երբ ենք ձեզ տեղեկություն տրամադրել կամ երբ ենք այն ձեր թույլտվությամբ բացահայտել, կամ երբ ենք ձեր մասին տեղեկությունը բուժման, վճարման կամ առողջապահական այլ գործողությունների համար տրամադրել:
- Դիմելու դեպքում դուք իրավունք ունեք ստանալու Անձնական Տվյալների Օգտագործման մասին Ծանուցման թղթե պատճեն: Դուք կարող եք այս Ծանուցումը գտնել նաև BCCTP-ի ինտրենետային կայքում՝ այցելելով. http://.dhss.ca.gov/BCCTP

ԻՆՉՊԵ՞Ս ԿԱՐՈՂ ԵՔ ՁԵՐ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՕԳՏԱԳՈՐԾԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԴԻՄԵԼ ՄԵՋ

Եթե ցանկանում եք օգտագործել այս Ծանուցման մեջ ներկայացված անձնական տվյալների անձեռնմխելիության ձեր իրավունքները, խնդրում ենք զանգահարել, գրավոր կարգով կամ էլեկտրոնային փոստով դիմել մեզ ներքևի վանդակում նշված հասցեով կամ հեռախոսահամարով: Մենք կուղարկենք ձեզ անհրաժեշտ փաստաթղթի ձևը:

Անձնական Տվյալների Գաղտնիության Հարցերով Զբաղվող Պաշտոնյա

Department of Health Care Services
MS 0010
P.O. Box 997413
Sacramento, CA 95899-7413
Հեռ.՝ (916) 445-4646 կամ (877) 735-2929 TTY/TDD
http://dhcs.ca.gov/privacyoffice

ԲՈՂՈՔՆԵՐ

Եթե կարծում եք, որ մենք չենք պահպանել ձեր անձնական տվյալների գաղտնիությունը, ապա կարող եք բողոք ներկայացնել՝ դիմելով Կալիֆորնիայի Առողջապահական Ծառայությունների Բաժնի Անձնական Տվյալների Գաղտնիության Հարցերով Պաշտոնյային վերը նշված հասցեով կամ այցելելով մեր ինտերնետային կայքը. http://dhcs.ca.gov/privacyoffice

Դուք կարող եք նաև զանգահարել կամ գրավոր դիմել Առողջապահական և Հասարակական Ծառայությունների Բաժնի Քարտուղարին հետևյալ հասցեով. U.S. Office for Civil Rights, 90 7th Street, Suite 4-100, San Francisco, CA 94103. Հեռ.՝ (800) 368-1019:

Կամ կարող եք զանգահարել Ա.ՄՆ-ի Քաղաքացիական Իրավունքների Գրասենյակ հետևյալ հեռախոսահամարներով. 866-OCR-PRIV (866-627-7748) կամ 866-788-4989 TTY/TDD:

ՁԵՐ ՆՊԱՍՏՆԵՐՆ ԱՊԱՀՈՎ ԵՆ

Եթե ցանկանաք բողոք ներկայացնել կամ օգտագործել այս Ծանուցման մեջ ներկայացրած անձնական տվյալների անձեռնմխելիության ձեր իրավունքը, ապա BCCTP-ն չի կարող զրկել ձեզ առողջապահական նպաստներից կամ ձեզ վնասող որևէ քայլի դիմել:

ԵԹԵ ՀԱՐՑԵՐ ՈՒՆԵՔ

Եթե ունեք հարցեր այս Ծանուցման վերաբերյալ և ցանկանում եք ստանալ լրացուցիչ տեղեկատվություն, խնդրում ենք դիմել այս Ծանուցման մեջ նշված Կալիֆորնիայի Առողջապահական Ծառայությունների Բաժնի Անձնական Տվյալների Գաղտնիության Հարցերով Զբաղվող Պաշտոնյային կամ այցելել մեր ինտերնետային կայք հետևյալ հասցեով. http://dhcs.ca.gov/privacyoffice

ԱՆՁՆԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ ԾԱՆՈՒՑՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄԸ

BCCTP-ն պետք է ենթարկվի այս Ծանուցմանը, որն ուժի մեջ է 2003 թ. ապրիլի 14-ից: Մենք իրավունք ունենք փոփոխելու մեր անձնական տվյալների օգտագործումը: Փոփոխություններ կատարելու դեպքում այս Ծանուցումը կվերախմբագրվի և անմիջապես կներկայացվի ձեզ:

Այս Ծանուցման օրինակն այլ լեզուներով, Բրեյլի տարբերակով, խոշոր տպագրությամբ, ձայներիզով կամ համակարգչային սկավառակով ձեռք բերելու համար խնդրում ենք դիմել այս Ծանուցման մեջ նշված Կալիֆորնիայի Առողջապահական Ծառայությունների Բաժնի Գաղտնիության Հարցերով Պաշտոնյային կամ այցելել մեր ինտերնետային կայք հետևյալ հասցեով. http://dhcs.ca.gov/privacyoffice.

Կալիֆորնիայի Նահանգ
Առողջապահական և Հասարակական Ծառայությունների Գործակալություն

Նահանգապետ՝
ԱՌՆԻԼ ՇՎԱՐՏՆԵԳԵՐ

Կալիֆորնիայի Առողջապահական Ծառայությունների Բաժին

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԿՐԹՔԻ և ԱՐԳԱՆԴԻ ՎԶԻԿԻ ՔԱՂՑԿԵՂԻ ԲՈՒԺՄԱՆ ԾՐԱԳԻՐԻ ԿՈՂՄԻՑ (BCCTP)

ԾԱՆՈՒՑՈՒՄ ԱՆՁՆԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ

Ուժի մեջ է 2003 թ. ապրիլի 14-ից

ԱՅՍ ԾԱՆՈՒՑՈՒՄԸ ՆԿԱՐԱԳՐՈՒՄ Է, ԹԵ ԻՆՉՊԵ՞Ս ԿԱՐՈՂ Է ՕԳՏԱԳՈՐԾՎԵԼ և ԲԱՑԱՀԱՅՏՎԵԼ ՁԵՐ ՄԱՍԻՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԹԵ ԻՆՉՊԵ՞Ս ԿԱՐՈՂ ԵՔ ՕԳՏՎԵԼ ԱՅԴ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆԻՑ: ԽՆԴՐՈՒՄ ԵՆՔ ԱՅՆ ՈՒՇԱԴԻՐ ԿԱՐԴԱԼ

Դուք ստանում եք այս Ծանուցումը, քանի որ հաշվառված եք պետության կողմից ֆինանսավորվող Կրթքի և Արգանդի Վզիկի Քաղցկեղի Բուժման Ծրագրում

BCCTP Notice of Privacy Practices
(Armenian) Rev. 1/09

Կրծքի և Արգանդի Վզիկի Քաղցկեղի Բուժման Ծրագիրը (BCCTP) պարտավոր է գաղտնի պահպանել ձեր առողջության մասին տեղեկությունը: Ձեր մասին տեղեկությունը մենք ստանում ենք այն ժամանակ, երբ դուք դիմում եք ծառայություններ ստանալու համար և երբ BCCTP ծրագրի համար ձեր համապատասխան լինելու վերաբերյալ կապ է հաստատվում BCCTP-ի, բժիշկների և կլինիկաների միջև: Ձեր քաղցկեղի բուժման վերաբերյալ մենք կարող ենք բժշկական տեղեկատվություն ստանալ ձեր BCCTP-ի դիմումի հաստատումից առաջ և հետո: Մենք պարտավոր ենք ձեզ ներկայացնել այս Ծանուցումը, որը պարզաբանում է, թե ինչպե՞ս է օրենքը թույլատրում մեզ օգտագործել և բացահայտել ձեր առողջության մասին տեղեկությունը և, թե ի՞նչ իրավունքներ ունեք դուք:

ԻՆ՞ՉՊԵՍ ՄԵՆՔ ԿՕԳՏԱԳՈՐԾԵՆՔ ԿԱՄ ԿԲԱՑԱՀԱՅՏԵՆՔ ՁԵՐ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆԸ

BCCTP-ն ձեր մասին տեղեկությունը օգտագործում և բացահայտում է BCCTP-ի գործավարության համար: Այս տեղեկությունն ընդգրկում է այնպիսի տվյալներ, ինչպիսիք են ձեր անունը, հասցեն, անձնական փաստերը, բժշկական տեղեկությունը, առողջապահական ապահովագրության մասին այլ տեղեկություն և ձեզ ցուցաբերված բժշկական խնամքի վերաբերյալ տեղեկություն: Այս տեղեկությունը մենք օգտագործում և տրամադրում ենք ուրիշներին հետևյալ պատճառներով.

- Բուժման համար. մենք կարող ենք ձեր մասին տեղեկություն ստանալ բժիշկներից, հիվանդանոցներից, առողջապության ապահովագրական ծրագրերից և ուրիշներից, երբ որոշում ենք կայացնում ձեր համապատասխան լինելու վերաբերյալ, որը ձեզ հնարավորություն է տալու ստանալ քաղցկեղի դեմ բուժում և դրան առնչվող այլ ծառայություններ BCCTP ծրագրի շրջանակներում: Ձեր բժիշկը կամ առողջապահական ծառայության ներկայացուցիչը կարող է տեղեկություն տալ ձեզ մատուցած բժշկական ծառայության, այդ բժշկական ծառայության արդյունքների և քաղցկեղի բացահայտման և ախտորոշման հետ կապված ձեզ անհրաժեշտ բժշկական այլ ծառայության մասին, ինչպես նաև տրամադրել տեղեկություն այն մասին, թե արդյո՞ք ձեզ այդ բուժումն անհրաժեշտ է:

- Վճարման համար. BCCTP-ն և մեզ հետ համագործակցողները վերանայում, հաստատում և ձեզ համար վճարում են առողջապահական ծառայության դիմաց նահանգի կողմից ներկայացված հաշիվները: Այս ընթացքում մենք տեղեկություն ենք տրամադրում այն բժիշկներին, կլինիկաներին և մյուս աշխատակիցներին, ովքեր մեզ հաշիվ են ներկայացնում ձեզ մատուցած առողջապահական ծառայության դիմաց:

- Առողջապահական գործողությունների համար. BCCTP-ն կարող է օգտագործել Ձեր առողջության մասին տվյալները ձեր ստացած առողջապահական ծառայությունների որակը ստուգելու համար: Այս տեղեկությունը մենք կարող ենք օգտագործել վերստուգումների և խարդախությունը բացահայտելու նպատակով հետաքննությունների ընթացքում կամ BCCTP-ն ծրագրելու և ղեկավարելու համար:

ՁԵՐ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿՈՒԹՅԱՆ ԲԱՑԱՀԱՅՏՄԱՆ ԱՅԼ ՁԵՎԵՐ

Օրենքը նաև թույլատրում է BCCTP ծրագրին օգտագործել կամ բացահայտել ձեր մասին ունեցած տեղեկությունը հետևյալ նպատակներով.

- Զանգահարել կամ գրավոր տեղեկացնել ձեզ BCCTP ծրագրի շրջանակներում տրամադրվող նպաստների վերաբերյալ
- Հասարակական առողջապահական գործունեության համար, ինչպիսին է աղետի դեպքում հաղորդելը
- Իրավական և վարչական գործերի համար, ինչպիսին դատարանի կարգադրությանը պատասխանելը
- Անձնական տվյալների անձեռնմխելիության մասին իրավական նորմերի բոլոր պահանջները բավարարող հետազոտական ուսումնասիրությունների համար, ինչպիսիք հիվանդության կանխման կամ բուժման համար հետազոտական ուսումնասիրությունները
- Օրենքով նախատեսված դեպքերում, ինչպիսին են վիրավորանքի կամ անփութության, աշխատողների փոխհատուցման մասին հաղորդելը
- Առողջապահական համակարգը ստուգող գործակալություններին, ինչպես նաև վերստուգումների կամ հետաքննությունների համար
- BCCTP-ի կողմից վճարված կամ մերժված առողջապահական հայցերի մասին որոշումների բողոքարկման համար
- Դաշնային կառավարությանը այն դեպքում, երբ նա ստուգում է, թե ինչպես ենք մենք պահպանում անձնական տվյալների անձեռնմխելիության մասին օրենքը
- Հասարակական նպաստներ տրամադրող կառավարության այլ գործակալություններին
- Տեղեկությունների այնպիսի շտեմարան ստեղծելու համար, որն այլևս չի կարող վերագրվել ձեզ

Ձեր առողջության մասին տեղեկությունը մենք կարող ենք տրամադրել այն կազմակերպություններին, որոնք մեզ աջակցում են մեր գործողությունների ընթացքում, օրինակ՝ BCCTP ծրագրի շրջանակներում ձեր ստացած ծառայությունների դիմաց վճարումների կատարումն ըստ հայցադիմումների: Այդ դեպքում մենք համոզվում ենք, որ նրանք պահպանում են մեր կողմից տրամադրված տեղեկատվության գաղտնիությունը:

Որոշ նահանգներում օրենքը սահմանափակում է վերը նկարագրված տեղեկության բացահայտումը: Օրինակ՝ գոյություն ունեն հատուկ օրենքներ, որոնք արգելում են բացահայտել տեղեկատվություն ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի, հոգեկան հիվանդության բուժման, զարգացման հետ կապված արատների և թմրանյութերի ու ոգելից խմիչքների չարաշահման մասին: Մենք կենթարկվենք այդ օրենքներին:

Ե՞ՐԲ Է ԱՆՀՐԱԺԵՇՏ ԳՐԱՎՈՐ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ

Նախքան BCCTP-ն վերը չնշված որևէ նպատակով կօգտագործի ձեր անձնական տեղեկությունը, մենք ձեզանից կստանանք ձեր գրավոր թույլտվությունը: Ձեր մասին տեղեկությունը այլ նպատակներով օգտագործելու կամ բացահայտելու համար մեզ գրավոր թույլտվություն տալուց հետո կարող եք այն ցանկացած ժամանակ գրավոր կարգով հետ պահանջել:

ՈՐՈ՞ՆՔ ԵՆ ՁԵՐ ԱՆՁՆԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՆՁԵՌՆՄԽԵԼԻՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ԸՍՏ ՕՐԵՆՔԻ

Դուք իրավունք ունեք.

- Մեզ խնդրել, ձեզ հետ կապ հաստատել միայն գրավոր կարգով կամ որևէ այլ հասցեով, որևէ այլ փոստային արկղի հասցեով կամ հեռախոսակապի միջոցով: Եթե անհրաժեշտ է պահպանել ձեր անձնական տվյալների գաղտնիությունը և երաշխավորել ձեր անվտանգությանը, մենք կընդունենք ողջամիտ պահանջները:
- Ստուգել և ձեռք բերել ձեր մասին BCCTP-ում պահպանվող տեղեկության պատճենները: BCCTP-ն ունի ձեր համապատասխանության մասին և բժշկական որոշ տեղեկություն, որը մենք օգտագործում ենք BCCTP ծրագրի շրջանակներում մատուցվող ծառայությունների համար ձեր համապատասխանելիությունը հաստատելու նպատակով: Ձեզնից կարող է գանձվել գումար տվյալների պատճենահանման և փոստով ձեզ ուղարկելու համար: Օրենքով թույլատրելի դեպքերում մենք կարող ենք արգելել ձեզ տեսնելու ձեր տվյալներն ամբողջությամբ կամ մասնակի: Այդ դեպքում մենք ձեզ կտեղեկացնենք, ինչպես բողոքարկել մեր որոշումը:
- Փոփոխել ձեր տվյալները եթե կարծում եք, որ ձեր մասին մեզ մոտ առկա որոշակի տեղեկություն սխալ է: Մենք կարող ենք մերժել ձեր պահանջը, եթե տեղեկությունը չի ստեղծվել կամ պահպանվել BCCTP-ի կողմից կամ եթե տեղեկությունն արդեն ճիշտ է և ամբողջական,: Եթե ձեր պահանջը մերժվել է, դուք կարող եք նամակ գրել մեր որոշմանը համամիտ չլինելու վերաբերյալ, և ձեր նամակը կպահպանվի ձեր տվյալների հետ:

ຖ້າທ່ານຕ້ອງການສຳເນົາໃບແจ້ງການກ່ຽວກັບການປະຕິບັດສິດທິຄວາມເປັນສ່ວນຕົວ ບຸກຄົນ ທີ່ກ່ຽວຂ້ອງກັບສິດທິຄວາມເປັນສ່ວນຕົວບຸກຄົນຂອງທ່ານ, ໂທເບີ (916) 445-4546 (Laotian)

「隱私權管理方法通知」闡述了您的隱私權，如果您想要索取一份，請致電 (916) 445-4546 (Mandarin)

ਜੇ ਤੁਸੀਂ ਜਾਣਕਾਰੀ ਨੂੰ ਗੁਪਤ ਰੱਖਣ ਦੇ ਵਿਹਾਰ ਦੀ ਕਾਪੀ ਲੈਣੀ ਚਾਹੁੰਦੇ ਹੋ, ਜੋ ਕਿ ਜਾਣਕਾਰੀ ਨੂੰ ਗੁਪਤ ਰੱਖਣ ਦੇ ਤੁਹਾਡੇ ਅਧਿਕਾਰ ਬਾਰੇ ਹੈ, ਤਾਂ ਇਸ ਨੰਬਰ 'ਤੇ ਫ਼ੋਨ ਕਰੋ: (916) 445-4546 (Punjabi)

Если вы хотите получить экземпляр “Уведомления о практике сохранения конфиденциальности информации”, содержащего информацию о ваших правах на сохранение конфиденциальности, позвоните по телефону (916) 445-4546 (Russian)

Si desea una copia del Aviso sobre Prácticas de Privacidad que explica sus derechos a la privacidad, llame al: (916) 445-4546 (Spanish)

Kung gusto ninyo ng kopya ng Paunawa Tungkol sa Hindi Pagsisiwalat ng Impormasyon, na nauukol sa inyong mga karapatan sa privacy, tawagan ang (916) 445-4546 (Tagalog)

Nếu quý vị muốn nhận được một bản Thông Tri Thực Hành Bảo Mật, nói về quyền riêng tư của quý vị, xin vui lòng gọi (916) 445-4546 (Vietnamese)